

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ինչպէս որ անցեալ ամսոյ Սիսիւ յայտնած էինք տեղւոյս Կառավարիչ Վսեմ. Քեամիլ Փաշայի մարդասիրական ոգին և յառաջագիմութեան ունեցած սէրն յայտնելով, որ դպրոցաց հանդէսները միշտ տեսնելու փափազը իւր սրտին մէջ վառ բլլալը կը ցունցնէր, նոյնը ահաւասիկ պիտի տեսնեմք հետագայ նամակին մէջ, որ Արքունի Վրան Եղարդոս Բարձր, Ալի փաշայի կողմէն խրկուած է Ալի Բեյին, Ս. Հայր. զոր նոյն ինքն Վսեմ. Քեամիլ փաշայ անձամբ այցելութիւն մը ալ տալով մատոյց Ս. Հոր Ն. Վսեմութեան Բարձ. Բալի փաշայի նա մակը, դպրոցաց յառաջագիմութեան վրայ իւր ունեցած սէրը և Տէրութեան ուրախութիւնն յայտնելով:

ՆԱՄԱԿԻՆ ՕՐԻՆԱԿԸ

Գուտաու, ջերիֆ Էրմենի Բաթրիքլիկիէ:

Բիւթպէթլու, Էֆենտի ճէնապէրի,

Սար Եագուտ Սանասթրըր մէք թէպի շախիրտանընըն պիր մու'թատ պու սէնէ տախի իծրայ օրւնան իմ' թիհանլէրի ճէմատթլերինտէ իղհար էթմիշ օջուսգլսրը Էսարի թէրէքքի, շայանա թագաիր պիր սուրէթտէ օրուտ պուտա սէմէրէի սանիվէ Էգ. Թամ ասըննէլէրի իտուկի, Գուտաու շէրիֆ միւթէտարըֆը սէտտէթլու Փաշայ հազրէթլերինին վադ'ը օլան ի շարլէրինտէն միւսթէպան օրնուշ, վէ պու վէճհ իլէ մէսարուֆ օլան հիմ' մէթի տօսթանէլէրի ագտէմի մուգասէթ Սալթանաթը սէնիյէտէն օլան տախրէի իլմ ու մտարըֆ գապիէիտայ բիէսինէ տախի թահմիլէ մուվաֆըք

օլարագ, իսթիլգամը մահգուզիէթ էյլէմիշ օլմաղ իլէ պէյանի հալ սիյադընտայ շուգպայը մախսուսէի մուհիպի թէրիմ գըրընտը:

ԿԱՎ	ՆԵՆԷ	ԿԱՎ	ՆԵՆԷ	ԿՆԻՔ
ՍԷՖԷՐ	Ն	ՆԻՅԱՆ	ԿԱ	ՄԴԱՄԷՔ
				ԷՊԻՆ ԱԼԷ

Քաջալերիչ է արդէ օք սոյն նամակի սրարուսակութեան ոգին թէ Ս. Պատրիարք Հօր ջանիցը թէ Սիսեան նութեան աշխատութեանը, և թէ դպրոցի աշակերտաց անխնայ աշխատասիրութեանը:

Սոյն քաջալերութիւնը ոչ միայն այս անգամ, այլ և առաջին անգամ ալ ցոյց տրուած է մեղ Կառավարութեան կողմէն, հրամայելով որ տեղւոյս նոր բացուած Տաճկերէնի գըրոցի համար յատուկ խրկուած դասատուն, օրը մէկ կամ երկու ժամ ալ մեր դպրոցը դաս տայ. ինչպէս որ կը շարունակէ ալ գաստատուն հաշտութեամբ կատարելով Տէրութեանէն իրեն եղած այս հրամանը:

(Սոմնեան Տէրութեան առ իւր հպատակա ունեցած այս զգացումն ու բաղձանքը բարեմաղթութեամբ կը բանայ Հայ Եղբայնոց բերանը:

Ամանապէս ալ ջրոյ մասին քաջաբացիկն տարած հոգը շատ է: Հայր Աբրահամու Վերեզմանին կողմերը գտնուած բաւական շատիկէ ջուր մը քաղաքը բերել վաղցնելու խօսքերը կը պտտին ժողովրդոց բերանը, այս ջուրը հին ատեններն արդէն քաղաքիս մէջ կը վաղէ եղեր, սրոյ ճանապարհն ալ պատրաստի է հին ատենէն շինուած քարէ խողովակներով, միայն թէ այս ջրոյն ճանապարհը տեղ տեղ աւրուած ըլլալով նորագուէն պէտք ունի: Բայց Երուսաղէմի մէջ վաղցնելու համար ամենէն գիւրա-

գոյնն այս ջուրը պիտի ըլլայ . թերևս
կառավարութիւնը կամ քաղաքին մէջ
կառուածոց հոգաբարձու ժողովն հոգ
տանի այս մասին աշխատելու և յա
տելու և յաջողի իսկ իւր աշխատու
թեանը մէջ :

Այս աեօակ ջուր մը քաղաքին մէջ
վազցնելով ապագայ մեծ չարիքներ
արգիլուած պիտի ըլլան : Բոտ որում
եթէ պատահի տարի մը որ անձրեւ
քիչ ըլլայ նոյն տարին նեղութիւնը կը
սասականայ սովի մասին : Իսկ ե
թէ երբէք ըլլայ տարի մը չանձրեւէ
երկինք բնաւ , նեղութիւնն ի՞նչ աւ
տիճանի պիտի ըլլայ , այն ալ թող փոր
ձառուներն ու հասկցողներն հետեւ
ցենն որ ուրիշ բան չէ եթէ ոչ ան
շուշտ մահ կամ փախստեամբ ազա
տութիւն : Այլ ինչո՞ւ Արուստղեմի
բոլորներն այսչափ ջուրեր գտնուելով
ծարաւն Արուստղեմի մէջ կոտորած
ընէ : Պէտք է անշուշտ նախատեսու
թեամբ ասոր առաջին առնել , քա
ղաքին մէջ ջուր մը վազցնելով :

Այլ երկին օրերս Յիսուսեան կրօ
նաւոր մը գալով քաղաքս , կառավա
րութեան ջուր հանելու տեղեր
ցոյց տուած է : Քաղաքիս մէջ Պիղոս
տոսի տունը ըսուած զօրանոցի առջե
ւը մէկ ջուր կայ եղեր 60 մեթր խո
րութեամբ : Ամանապէս ոտքի չափ
հաստութեամբ ջուր մ'ալ Վեդսե
մանի ձորը պարտիզի մը մէջ կայ ե
ղեր դարձեալ 60 մեթր խորութեամբ .
Այլ կը լսենք որ կառավարութիւնն
այս երկու ջուրերուն մէկուն նշանա
նակուած տեղէ հոր պիտի բանալ տայ ,
Սակայն աւելի լաւ է հայր Աբրահա
մու ըսուած ջուրը բերել , քանի՞
այս գետինները բանալ տալ . մէկ մի
որ դուրսի ջուրին ճանապարհին շատ
մեծագոյն մաւր պատրաստ ըլլալով
քիչ մը տեղ միայն նորոգութեւ պէտք

ունի . և այս նորոգութեան համար
ըլլալիք ծախքն աւելի քիչ կ'ըլլայ Ա
րուստղեմի մէջ 60 մեթր խորութեւ
հոր մը բանալու ծախքէն : Սէկ մ'ալ
այս ըսուած ջուրերը Յիսուսեան մե
կը . կ'ելէ ըսելով հաւատարի չ'են
կրնար ըլլալ . և գուցէ այն ծախքն
յանձն առնելով ընելէ վերջը ջուրը
չեւաւ , բոլոր եղած ծախքն ՚ի զուր
գնացած պիտի ըլլայ :

— Փարիզի Հրէից Իսրայէլական ըն
կերութիւնը բարձր գրան հրովարտա
կրն ստացած է Յոսպէի մէջ երկրա
գործութիւն մը բանալու . հրովար
տակի տուած ազատութիւններն են
որ Սէմէի և Յոսպէի պարտեզնե
րուն մէջ տեղը երկու հազար վեց հա
րիւր արտաւար (տէօնիւմ) գետին
տէրութիւնն իրենց պիտի բաշխէ ,
առան տարի ալ առանց տուրքի պիտի
բանեցնեն : Յոսպէի մէջ ալ երկրա
գործական և ուրիշ արուեստներու
դպրոց մը պիտի բանան , Արուստղե
մի աղքատ Հրէից տղայքներն հոն
ձրի կրթելու համար :

Ղազէի Երաքներուն մէջ ամնոյս
սկիզբէրը ապստամբական ցոյցեր ե
լած են տէրութեան հարկերը չիճա
րելու , ասոր վրայ Ղամասիոսի զօրաց
Սիւշիր Փաշայն վաշտ մը զօրքով Ա
րուստղեմի Սութասարքի Քեամիլ
Փաշայի ընկերակցութեամբ Ղազէ
երթալով ապստամբութիւն ցուցնող
Շէխերը մէկտեղ ժողովելով խնար
հեցուցին տէրութեւ տուրքերն անպա
կաս հատուցանելու , և վերադարձան :

— Անքերու տեսչոց փոփոխու
թիւնն ըլլալով , Յոսպէի Վանաց տե
սուչ կարգեցաւ Արթ . Ազեկիէ վար
դապետը :

Ս . Օննգեան Վանուց Արթա .
Թովմաս Վարդապետն այս տարի ևս
նորոգուեցաւ իր պաշտօնին մէջ :